Արձանագրություն N 2

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2025-70» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» նոյեմբերի 2025 թ. ժամը 10:30-ին
«14» նոյեմբերի 2025 թ. ժամը 15:30-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.
Նախագահ՝ Ա. Ավանեսյան
Անդամներ՝ Ռ. Հարությունյան, Ա. Մուրադյան
Քարտուղար՝ Ա. Վիրաբյան
Բացակայում է.

Օրակարգ.

**«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2025-70» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի անցկացում**

**Ընդունել ի գիտություն, որ՝**

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել և հիմնավորումներ չեն ներկայացվել:

1. **«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2025-70» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
   քարտուղարի կողմից 10:30-ին հայտերի գրանցամատյանը փակելուց հետո, նախագահը հրապարակել է նախահաշվային գները/ բացակայությունը:
2. **Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | ՀՀ, Սյունիքի մ., ք. Կապան, Մ.Ստեփանյան, 13, հեռ. 098-11-22-79, 0285-2-85-96, e-mail: kapanhospitalgnumner@mail.ru |

3. **Տվյալներ ծրարը կազմելու, ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին և բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
   մասնակից ընկերությունների կողմից ներկայացված ծրարները կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2025-70» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Փակ կնքված ծրարով բոլոր մասնակիցները ներկայացրել են.
   - դիմում-հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու,
   - գնային առաջարկ,
   - հավելվածներ NN 1.1, 1.2:

Վերոնշյալ կազմակերպությունների ներկայացված փասթաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**
   մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2025-70» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
5. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/.**
   ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները.

| չ/հ | Ծառայության անվանումը | չ/մ | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) | Քանակ | «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Մասնակցի գնային առաջարկը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ) | Մասնակցի գնային առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ (ՀՀ դրամ) |
| 1 | ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի «Սյունիք» մասնաճյուղի լաբորատոր աշխատակիցների բուժական զննության ծառայություններ | դրամ | 112,700 | 1 | 170,100 | 170,100 |
| 2 | ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի «Սյունիք» մասնաճյուղի լաբորատոր աշխատակիցների բուժական զննության ծառայություններ 2 | դրամ | 211,200 | 1 | 231,000 | 231,000 |

6. **Գնահատման արդյունքների վերաբերյալ.**
Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները ներկայացվել են գնահատման թերթիկում:

Որոշում.

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությունը, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից:
2. №№ 1-ն և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ընկերությանը:
3. Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի, անգործության ժամկետ չի սահմանվում, հետևաբար, պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ընկերությանը՝ 401,100 /չորս հարյուր մեկ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Ստորագրություններ.
Նախագահ՝ Ա. Ավանեսյան

Անդամներ՝ Ռ. Հարությունյան

Ա. Մուրադյան

Քարտուղար՝ Ա. Վիրաբյան